Երեւանի քաղաքապետարան
Քաղաքապետ Ավինեանին

9 մարտի 2026 թ.

Յարգելի պարոն Քաղաքապետ,

Փետր. 6-ին ես հանրագիր էի յղել ՀՀ Վարչապետին ՀՀ-ում սահմանադրականութեան մակարդակը բարձրացնելու վերաբերեալ առաջարկներով, մասնաւորապէս, կցել էի աւելի քան 12 տարի պաշտօնական շրջանառութեան մէջ գտնուող սահմանադրական բարեփոխումների հայեցակարգն ու դրա հիման վրայ իրականացուած բարեփոխուած սահմանդրութեան նախագիծը: Վարչապետն այդ հանրագիրը փոխանցել է Արդարադատութեան նախարարութիւն, որի անմիջական ենթակայութեամբ գործում է սահմանադրական խնդիրներով զբաղուող համապատասխան կառոյցը: Փետր. 16-ին Արդ. Նախարարութիւնը մեզ պաշտօնապէս տեղեկացրեց, որ մեր առաջարկները «... խորհուրդը նկատի կունենայ նոր սահմանադրութեան տեքստի մշակման ժամանակ»: Այդ պատասխանով Արդ. նախարարութիւնը հակադրուեց Կուսակցութիւնների մասին սահմանադրական օրէնքի (ԿՄՍՕ) 21-րդ յօդուածի պահաջին, որը կուսակցութիւնից ստացուած հանրագրի համար հստակ ամրագրել է ՔՆՆԱՐԿԵԼ հասկացութիւնը:

Մենք մեր պարտքն ենք համարում իրազեկել Արդարադատութեան նախարարութեանը, որ իրենց կեցուածքը համապատասխանում է իշխանութեան չարաշահմամբ ԿՄՍՕ-ի պահանջը միտումնաւոր կերպով խախտելուն: Դրանից ելնելով դիմելու ենք Գլխ. դատախազին յանցագործութեան վերաբերեալ հաղորդմամբ: Միաժամանակ, ՀՀ կառավարութեանը իրազեկելու ենք, որ երեւոյթը չդատապարտելու, մեղաւորներին չպատժելու դէպքում այդ բոլոր բացասական գործողութիւնների հովանաւոր եւ աւելին՝ կազմակերպիչ, մեր հիմնաւոր կասկածներով հենց ինքը՝ Վարչապետն է:

Ուստի որոշել են կազամկերպել ցոյց-հաւաք Արդարադատութեան նախարարութեան դիմաց մարտի 12-ին ժամը 17:00, որից յետոյ երթով գնալու ենք Գլխ. դատախազութիւն՝ 17:30 եւ Կառավրութիւն՝ 17: 50: Մասնակիցների թիւը ենթադրաբար լինելու է 100-1000 քաղաքացի:

Պարոյր Հայրիկեան
ԱԻՄ նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
UNION FOR SELF-DETERMINATION OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆ